ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«10» 09 2025 թ.
№ ԿԱՆ2/1438

«ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ -ին /ՀՎՀՀ 04724855/
ՀՀ ք.Բաղրամյան/Վաղարշապատ/,Աբովյան փ.10/1
էլ. փոստի հասցե՝ kafagamallc@gmail.com
Հեռ.՝ 095 04 08 81

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 16.04.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/9-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակում Ընկերությունը պետք է մատակարարեր 40 հատ Բազկաթոռներ /բազկաթոռներ խորհրդակցության/, 22 հատ Բազկաթոռ՝ ղեկավարի /բազկաթոռ կաշվե/, 40 հատ Բազկաթոռ՝ ղեկավարի /բազկաթոռ կտորից/, 300 հատ Աթոռներ /աթոռ փափուկ մետաղական կարկասով/, 150 հատ Բազկաթոռներ /բազկաթոռ համակարգչի/, 30 հատ Չհրկիզվող պահարաններ /Պահարան չհրկիզվող/, 40 հատ Մետաղական պահարան /մետաղական պահարան երկխորշանի/, 50 հատ Արխիվի դարակաշարեր /արխիվի դարակաշարեր/ և 14.4 քմ Հայելի շրջանակով /Հայելի շրջանակով/, սակայն «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ն 16.07.2025թ. ներկայացրել է գրություն (մուտք ՊՆՏ 2467 առ 16.07.2025թ.) ապրանքների մատակարարման հետ ծագած խնդիրների պատճառով Պայմանագիրը ամբողջությամբ լուծելու խնդրանքով, այսպիսով Վաճառողը գրությամբ հրաժարվել է կնքված պայմանագիրը ամբողջությամբ կատարելուց:

Հիմք ընդունելով «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ի գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. սեպտեմբերի 10-ին, միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 108 810 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 72 540 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 21.07.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1 934 400

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 2 901 600 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1 934 400 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 2 901 600 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. սեպտեմբերի 22-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ